ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման ծառայությունների /այսուհետ՝ Ծառայություն/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.02.2020 ժամը 12.00-ին

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Վ. Ավետիսյանը

**Անդամներ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ — Ռ. Սահակյանը, Գ. Սահակյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/ — Գ. Զաքարյանը, Ի. Պողոսյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ/ — Մ. Նիկոլյանը

Հանձնաժողովը արձանագրեց

1. **Տեղեկություն հայտերի բացման օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Ծառայության ձեռքբերման նպատակով 18.02.2020 էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով՝ 26.02.2020, ժամը 12.00-ին:

2. **Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | գործունեության հասցեն<br>էլ. փոստի հասցեն | հեռախոսա-համար | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Գրիտիգ ՍՊԸ | ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան<br>gritig@inbox.ru | 043600090 | 04229504 |
| 2 | Վանաձորի նախագիծ ՍՊԸ | ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրամ Մեծ 22<br>Vannakh2014@mail.ru | 077998887 | 06922308 |
| 3 | ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Եղիշե Թադևոսյան 11<br>Ipog.acc@mail.ru | 091248549 | 0911617 |

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Վանաձորի նախագիծ, ԷԼ-ՄԹՐՈՅ ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են ՀՀՌՅ-ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով Ծառայության ձեռքբերման Ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին /կցվում են/:

3.2 Գրիտիգ ՍՊ ընկերության հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերի 1 չափաբաժնով նախատեսված Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներդիրը, ինչպես նաև դիմում հայտարարության մեջ գործունեության հասցեն նշվել է ոչ համապատասխանաբար:

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ*

| Աշխատանքի | | | | Գրիտիգ ՍՊԸ | Էլ-Մտրոյ ՍՊԸ | Վանաձորի նախագծող ՍՊԸ |
|---|---|---|---|---|---|---|
| Չ/հ | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | նախահաշ-վային գինը | | | |
| 1 | Գյումրիի կայանի H=180մ բարձրության հեռուստա-աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակա-կոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքներ որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում | դրամ | 402 360 | 2 200 000 | 1 150 000 | - |
| 2 | Երևանի հաղորդիչ կենտրոնի տեխնիկական մասնաշենքի հարթ տանիքի վերանորոգ-ման աշխատանքների որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում | դրամ | 677 472 | - | - | - |
| 3 | Տրանսֆորմատորային ենթակայան ԳԵ-290 տանիքի վերանորոգման աշխատանք-ների որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում | դրամ | 84 924 | - | 345 000 | - |
| 4 | Տրանսֆորմատորային ենթակայան ԳԵ-126 տանիքի վերանորոգման աշխատանք-ների որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում | դրամ | 46 668 | - | 172 000 | - |
| 5 | Տրանսպորտային ծառայութ-յան վարչական հատվածի վերանորոգման աշխատանք-ների որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում | դրամ | 243 072 | - | - | - |
| 6 | Պահակատան անցակետի շենքի վերանորոգման աշխատանքների որակի և տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում | դրամ | 160 128 | - | - | - |
| 7 | Վանաձորի շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման վերաբերյալ եզրակացության տրամադրում | դրամ | 125 000 | | | 69 000 |
| 8 | Իջևանի տրանսպորտային և պահեստային շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման վերաբերյալ եզրակացության տրամադրում | դրամ | 45 000 | | | 69 000 |
| 9 | Ամասիայի հեռուստակայանի արտադրական շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման վերաբերյալ եզրակացության տրամադրում | դրամ | 155 000 | | | 69 000 |

*<u>* Մասնակիցները չեն հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող</u>*

5. Հանձնաժողովը որոշեց

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել **մեկ** աշխատանքային օրով՝ մինչև **27.02.2020 ժամը 16.00-ը և** Գրիտիգ ՍՊ ընկերությունից պահանջել ներկայացնել հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներդիրը, ինչպես նաև շտկել Հավելված 1-ով նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

6. Հանձնաժողովը արձանագրեց.

6.1 Գրիտիգ ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են սույն արձանագրության 3.2 կետով նշված անհամապատասխանությունները /27.02.2020 էլեկտրոնային փոստով ներկայացվել են համապատասխան փաստաթղթեր /կցվում են//:

6.2 Չափաբաժիններ 2,5,6-ով հայտեր չեն ներկայացվել:

7. Հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ **նիստը կասեցնել երկու** աշխատանքային օրով և 1, 3, 4, 7, 8, 9-րդ չափաբաժիններով գնային առաջարկներ ներկայացրած բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ **մինչև 02.03.2020 ժամը 12.00:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Նիստը շարունակվել է 02.03.2020 ժամը 12.00

8. Հանձնաժողովը արձանագրեց.

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին Գրիտիգ ՍՊ ընկերության կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել, իսկ Էլ-Ստրոյ ՍՊ և Վանաձորի նախագծող ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրել են 1, 3, 4, 8 չափաբաժիններով նոր նվազեցված գնային առաջարկներ՝ նախահաշվային գնին համապատասխան, մյուս չափաբաժիններով գներ չեն նվազեցվել /կցվում են/:

9. Հանձնաժողովը որոշեց

9.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով ՝ Գրիտիգ, Էլ-Ստրոյ, Վանաձորի նախագծող ՍՊ ընկերությունների ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 2,5,6 չափաբաժիններով: Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստերը հայերեն և ռուսերեն լեզուներով /կցվում են/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

9.2 Չափաբաժիններ 1,3,4-ով որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից՝ առաջին տեղը զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչել Էլ-Ստրոյ ՍՊ ընկերությանը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

9.3 Չափաբաժիններ 7,8,9-ով որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից՝ առաջին տեղը զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչել Վանաձորի նախագծող ՍՊ ընկերությանը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

9.4 Չափաբաժիններ 2,5,6-ով հայտարարել նոր մրցույթ

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ավետիսյան

անդամներ՝ Ռ. Սահակյան

Գ. Սահակյան

Գ. Զաքարյան

Ի. Պողոսյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան